ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

11.10.2024թ. ք. Էջմիածին

Սույն թվականի հոկտեմբերի 11-ին, ժամը 11:00-ին ՀՀ Արմավիրի մարզի, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում, «Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաշժտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքում /Հասցեն՝ ք.Էջմիածին Կոմիտասի հրապարակ 0 շենք/ տեղի ունեցավ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Վազգեն Առաջինի փող., թիվ 40 շենքի 43 բնակարանի բնակիչ Կարեն Մկրտչյանի կողմից Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Շահումյան փողոցի թիվ 75/3 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկում քննարկում /1-ին փուլ/:

Ելույթ ունեցան՝

Ս. Աղաջանյան – Քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Ներկայացրեց, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 19.09.2014 թվականի թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2024թ. հոկտեմբերի 11-ին, ժամը 11.00-ին «Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաշժտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքում տեղի է ունենում ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Շահումյան փողոց թիվ 75/3 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկում /1-ին փուլ/: Համայնքի ղեկավարի խորհրդականը նշեց, որ հանրային քննարկման վերաբերյալ տեղեկատվությունը 19.09.24 թվականից տեղադրված է համայնքային կառավարման տեղեկատվական հարթակներում: Հավելվեց նաև, որ շահագրգիռ հանրությունը հնարավորություն ուներ մինչև 2024 թվականի հոկտեմբերի 7-ը ներառյալ ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ՝ գրավոր՝ Վաղարշապատի համայնքապետարան, ՀՀ, Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոցի փող, 0 հասցեով կամ էլեկտրոնային՝ lratvutyunn@gmail.com էլ. հասցեով: Սակայն, այդպիսիք չեն ստացվել: Հանրային քննարկման հայտարարությունը հրապարակվել է «ԹիՎի Ալիք» թերթում՝ 19.09.2024թ.:

Ա. Սահակյան– Ճարտարապետ

Ճատարապետը ներկայացրեց նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շինության էսքիզային տարբերակը: Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 3584քմ, կառուցապատման մակերեսը՝ անջրանցիկ տարածքները ներառյալ 2149քմ, կանաչապատ տարածք 1435քմ /40%/, շենքի ընդհանուր մակերես 15777.4քմ: Նախատեսվում է կառուցել մեկ ստորգետնյա և 12 վերգետնյա հարկերով բազմաֆունկցիոնալ բնակելի շենք, ստորգետնյա

հարկը՝ ավտոկայանատեղի, նախատեսված 64 ավտոմեքենաների համար, իսկ վերգետնյա հարկերից 1-ին և 2-րդ հարկերը նախատեսվում են հասարակական նշանակության տարածքներ, 3-ից 12-րդ հարկերը բնակելի՝ 119 բնակարան: Ճարտարապետը հավելեց, որ նկուղային հարկերը հնարավոր է օգտագործել նաև քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների կազմակերպման համար /որպես ապաստարան/:

Ա. Գալոյան

Ներկայացրեց փորձաքննական գործընթացը, նշելով, որ ըստ Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի պահանջների, նախատեսվող գործունեությունը երթակա է բնապահպանական փորձաքնության և այն անցկացվելու է Բ կատեգորիայի ընթացակարգով: Պատրաստվելու է համապատասխան հաշվետվություն, որով ներկայացվելու է առկա իրավիճակը, շրջակա միջավայրի իրավիրճակը, նախատեսվող գործունեությունն իր տեխնոլոգիական ցուցանիշներով: Ներկայացվելու են հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք պայմանավորված են լինելու փոշու արտանետման տեսքով և շինհրապարակում շահագործվող շինտեխնիկայի դիզելային վառելիքի այրումից առաջացած արտանետումներով: Հաշվետվությամբ մանրամասն ներկայացվելու են բացասական ազդեցությունների կանխարգելիչ միջոցառումները՝ տարածքի ցանցապատում, շինհրապարակի ջրցանում, շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում, նմանատիպ մի շարք այլ միջոցառումներ: Նաև նշեմ, որ շինարարական աշխատաքների ավատից հետո տարածքը կկանաչապատվի և կբարեկարգվի՝ բնակլիմայական պայմանների համապատասխան:

Հարցերի բացակայության հիմքով հանրային լսումն ավարտվեց:

Որոշում.

Որոշվեց հանրային լսման արձանագրությունը ներկայացնել համայնքի ավագանուն:

Հանրային լսման պատասխանատու և

արձանագրող՝ Մ.Պողոսյան _____

Վարող՝ Ս. Աղաջանյան _____

Նախագծի ճարտարապետ՝ Ա. Սահակյան _____